ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՀԵ ՍԱՐԳԻՍԻ

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԿԱՌԼ ՖՐԻԴՐԻԽ ԼԵՄԱՆ-ՀԱՈՒՊՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (Ք.Ա. XIII – VI ԴԴ.)

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու
Ցականյան Ռուսլան Արշակի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Փիլիպոսյան Աշոտ Սուրենի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հմայակյան Սիմոն Գևորգի

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026 թ. փետրվարի 24-ին, ժամը 13^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հունվարի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պ.գ.թ., դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Արդի ուրարտագիտական հետազոտություններն անհնար է պատկերացնել առանց Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտի (1861-1938) ուսումնասիրությունների: Սույն ատենախոսությունում ժամանակագրորեն շարադրված և ըստ քննարկվող խնդիրների համակարգված կերպով առաջին անգամ ներկայացվում են Կ.Ֆ. Լեման-Հաուպտի՝ Վանի թագավորության պատմությանն առնչվող հետազոտությունները:

Հետազոտողի՝ Վանի թագավորության պատմությանն ու մշակույթին առնչվող առաջին գիրքը *«Նյութեր Հայաստանի և Միջագետքի հնագույն պատմության»* աշխատությունն է[1]: Սույն երկում առանցքային են Տիգրիսի թունելում, Մանազկերտում և Բաբիլ գյուղում գտնվող ասորեստանյան արքաների՝ Թիգլաթպալասար I-ի (Ք.ա. 1114-1076 թթ.), Սալմանասար III-ի (Ք.ա. 858-824 թթ.) և Աշուրնաձիրպալ II-ի (Ք.ա. 883-859 թթ.) արձանագրությունների վերաբերյալ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի հետազոտությունները: Երկի մյուս առանցքային հատվածը Ռուսախինիլիում (Թոփրաքքալե) իրականացված պեղումներն են և հայտնաբերված գտածոները:

Այս աշխատությանը հաջորդել է հետազոտողի երկհատոր կոթողային գործի՝ *«Հայաստանն անցյալում և այժմ»* երկի առաջին հատորի հրատարակությունը[2]: Այն շարադրված է ըստ արշավախմբի երթուղու և ժամանակագրորեն կատարված հետազոտությունների: Վերոհիշյալ հանգամանքը պայմանավորել է նաև իրողությունը, որ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի հետազոտություններում երևույթների, իրադարձությունների միջև կապը և եզրակացությունները ըմբռնելու համար հաճախ հարկ է շուրջ կեսդարյա հետազոտական շղթայում քննել հեղինակի աշխատությունները: Քանի որ վերոհիշյալ աշխատությունը շարադրվել է ուղեգրության տարբերակով, երկում գրեթե բացակայում են հղումները: Այս բացը խիստ խրթին է դարձնում գիտնականի հետազոտական աշխատանքի ընթացքի վերականգնումը՝ եզրակացությունների հիմքը, ինչպես նաև այլոց հետազոտությունների հիման վրա արծարծված մտքերը: Սույն հանգամանքներով պայմանավորված՝ ատենախոսությունում առանցքային ենք համարել հետազոտողի օգտագործած աղբյուրների և դրանց թարգմանությունների ստուգումը, քանզի դա պայմանավորել է նրա եզրակացությունները: Բացի այդ, փորձ է արվել վերականգնել Կ.Ֆ. Լեման-Հաուպտի օգտագործած ուսումնասիրությունները: Աղբյուրագիտական և պատմագրական սույն քննությունը հնարավորություն է ընձեռել հետազոտողի արծարծած վարկածներին և եզրակացություններին անդրադառնալ նորովի:

Այս հատորի առանցքային անդրադարձը Տիգրիսի թունելի արձանագրությունների վերանայված հետազոտությունն է, որին հաջորդում են Մեծկերտի մոտ և Եփրատի ափին (Իզոլու) գտնվող արձանագրությունների վերաբերյալ ուսումնասիրությունները: Վերջինիս ծիրում քննարկվում է նաև Ուրարտուի և Ասորեստանի միջև մղված պայքարը Սարդուրի

---

[1] Lehmann-Haupt C. F., Materialien zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens (Abhandlungen der Königlichen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen, Philologisch-Historische Klasse, Neue Folge Band IX, №3, Berlin, 1907.

[2] Lehmann-Haupt C. F., Armenien einst und jetzt, Bd. I: Vom Kaukasus zum Tigris und nach Tigranokerta, Berlin, 1910.

II-ի (Ք.ա. մոտ 771-735 թթ.) օրոք[3]: Սույն պայքարին նվիրված որոշ խնդիրներ հեղինակը մասնակի վերանայել է նաև 1926 թ. լույս տեսած երկրորդ հատորի առաջին գրքում[4]:

Սույն գրքում ներկայացված են Վան քաղաքում և Վանա լճից հյուսիս և արևելք ընկած շրջաններում արշավախմբի իրականացրած հետազոտությունները: Այս հետազոտությունների ծիրում առանցքային են հայտնաբերված արձանագրությունները և ուրարտական հնավայրերի ուսումնասիրությունները, այդ համատեքստում՝ հետազոտողի դիտարկումները: Երկրորդ հատորի առաջին գրքի առանցքային անդրադարձներից է Թոփուզավայի արձանագրությունը Մուծածիրում կանգնեցնելու հանգամանքների վերաբերյալ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի հետազոտությունը: Ցարդ եզակի են նաև հետազոտողի նկարագրությունները ուրարտական հիդրոշինարարական կառույցներից Քեշիշ-գյոլի և Մենուայի ջրանցքի վերաբերյալ: Մենուայի ջրանցքին առնչվող Շամիրամի առասպելից հեղինակն ածանցել է իր մեկ այլ աշխատությունը՝ *«Պատմական Շամիրամը և նրա ժամանակը»*[5], նվիրված առասպելական թագուհուն, որի ասքի ձևավորման հայրենիքը Կ.Ֆ. Լեման-Հաուպտը համարում է գերազանցապես Հայաստանը: Սույն աշխատության դրույթներն արծարծվել են նաև «*Հայաստանն անցյալում և այժմ*» աշխատության երկրորդ հատորի առաջին գրքում:

«*Հայաստանն անցյալում և այժմ*» աշխատության երկրորդ հատորի երկրորդ գրքում[6] քննարկվում են Ռուսախինիլիում (Թոփրաքքալե) կատարված պեղումների արդյունքները և Վանի թագավորության մշակույթին առնչվող հեղինակի դիտարկումները, որոնք ածանցվում են «*Նյութեր Հայաստանի և Միջագետքի հնագույն պատմության*» աշխատությանը: Ուշագրավ է, որ սույն գրքում արծարծված Վանի թագավորության անկման ու արմենների գաղթի մասին Կ.Ֆ. Լեման-Հաուպտի արծարծած տեսությունը երբևիցէ պատշաճ չի քննարկվել[7]: Այս գրքում առանձնակի է նաև Հայաստանի մասին Քսենոփոնի հաղորդած տվյալներն Ուրարտուի անկման համապատկերում հեղինակի վերականգնման փորձը:

Կ.Ֆ. Լեման-Հաուպտն առաջինն է, ով անդրադարձել է Առաջավոր Ասիայում հաստատված կիմմերներին և Ք.ա. VIII դարի վերջից նրանց ու Ուրարտուի միջև ծավալված հարաբերություններին[8]: Հետազոտողի առաջարկած ժամանակագրական վերականգնումները հանդիսանում են ցարդ Վանի թագավորության և կիմմերների աղերսների հենքը:

Սույն ատենախոսությունում «*Հայաստանն անցյալում և այժմ*» երկի Վանի թագավորության պատմությանն առնչվող անդրադարձները քննվել և համադրվել են Կ.Ֆ. Լեման-Հաուպտի անավարտ մնացած ուրարտական արձանագրությունների դիվանի

---

[3] Lehmann C. F., Chaldische Forschungen: 6. Tiglatpileser III. gegen Sardur von Urartu, “Verhandlungen der Berliner Gesellschaft für Anthropologie, Ethnologie und Urgeschichte”, 1896, Bd. 28, S. 321–327.

[4] Lehmann-Haupt C. F., Armenien einst und jetzt, Bd. II/1: Das Türkische Ost-Armenian – In Nord-Assyrien, Berlin-Leipzig, 1926.

[5] Lehmann-Haupt C. F., Die historische Semiramis und ihre Zeit: Vortrag gehalten in der Deutschen Orient-gesellschaft zu Berlin am 6. Februar 1910, Tübingen, 1910.

[6] Lehmann-Haupt C. F., Armenien einst und jetzt, Bd. II/2: Kultur, Herkunft und Verbleib der Chalder – Der Rückzug der zehntausend Griechen von der Ebene Alaschgert zum Schwarzen Meer, Berlin-Leipzig, 1931.

[7] Lehmann C. F., Die Einwanderung der Armenier im Zusammenhang mit den Wanderungen der Thrakier und Iranier, “Verhandlungen des 13. Internationalen Orientalistenkongresses”, Hamburg, 1902, S. 130-140.

[8] Lehmann-Haupt C. F., Kimmerier, Realenzyklopädie der klassischen Altertumswissenschaft, Bd. XI, 1922, S. 397–434.

տվյալների հետ[9]: Հետազոտողի այս աշխատությունը ներառում է Լութիպրիի որդի Սարդուրիի, Իշպուինիի (Ք.ա. մոտ 830-810 թթ.) ու Մենուայի (Ք.ա. մոտ 810-791/790 թթ.) թողած արձանագրությունները, թարգմանությունները, դիտարկումները, հայտնաբերմանն ու տեղանքին առնչվող վկայությունները: Հաշվի առնելով սույն բացը՝ հաջորդ արքաների թողած արձանագրություններում վկայված իրողությունների վերաբերյալ, հետազոտողի պատկերացումներին ծանոթանալու համար, օգտվել ենք նրա զեկույցից[10]:

Ի դեմս սույն աշխատությունների՝ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի թողած վիթխարի ուրարտագիտական ժառանգությունը՝ վերը նշված խնդիրների ամբողջական քննարկումով, մինչ այս ուշադրության չի արժանացել: Հեղինակի հաղորդած տեղեկությունները ուրարտական հնավայրերի, սեպագիր արձանագրությունների, տեղանքի, XIX դարավերջին Հայկական լեռնաշխարհում եղած ճանապարհների վերաբերյալ այժմ եզակի են և դարձել են առաջնային սկզբնաղբյուր: Կ.Ֆ. Լեման-Հաուպտի՝ Հայկական լեռնաշխարհի Ք.ա. XIII-VI դդ. պատմությանը նվիրված հետազոտությունների ուսումնասիրումը արդիական է ասորեստանյան արշավանքերի, պատմաաշխարհագրական տեղորոշումների, Վանի թագավորության կազմավորման ու վերելքի, Ասորեստանի դեմ մղված պայքարի, Ուրարտուի անկման, Հայոց թագավորության ձևավորման խնդիրների քննության համատեքստում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել ականավոր ուրարտագետ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի աշխատություններում Վանի թագավորության պատմության հիմնահարցերը: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևալ խնդիրները.

- Լուսաբանել Ք.ա. XIII-IX դդ. Հայկական լեռնաշխարհ իրագործված Ասորեստանի արշավանքների ծիրում Ուրուատրի-Ուրարտու և Նաիրի երկրներին առնչվող Կ.Ֆ. Լեման-Հաուպտի տեղորոշումները, ինչպես նաև՝ արշավանքների ուղիները,
- Քննել այն գործոնները, որոնցով հետազոտողը պայմանավորում է պետականության վերելքը Հայկական լեռնաշխարհում՝ պայմանավորված *պատմագիտության մատերիալիստական ըմբռնմամբ*,
- Պարզաբանել թագավորության վերելքը Վանա լճի արևելյան ավազանում Իշպուինի արքայի միանձնյա գահակալության շրջանում՝ ըստ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի հետազոտությունների,
- Հետազոտել Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալության շրջանում թագավորության ծավալումը մերձուրմյան ավազան և Մուծաձիրի հետ ձևավորված աղերսները,
- Վերհանել Մենուայի գահակալության շրջանում երկրի տնտեսական զարգացմանը խթանող գործոնները, որոնք նպաստեցին թագավորության հետագա ընդլայնմանը և Ասորեստանի դեմ մղվող պայքարում հաջողությանը,
- Քննել Արգիշտի I-ի (Ք.ա. մոտ 791/790-771 թթ.) և Սարդուրի II-ի օրոք Ասորեստանի դեմ իրականացված արշավանքների երթուղիների վերականգման առնչությամբ հետազոտողի աղբյուրագիտական հենքը: Սույն համատեքստում լուսաբանել

[9] Lehmann-Haupt C. F., Corpus Inscriptionum Chaldicarum, Berlin-Leipzig, Bd. I, 1928, Bd. II, 1935.

[10] Lehmann C. F., Bericht über die Ergebnisse der von Dr. W. Belck und Dr. C. F. Lehmann 1898/99 ausgeführten Forschungsreise in Armenien, “Sitzungsberichte der preussischen Akademie der Wissenschaften philosophisch-historische Classe”, 1900, Bd. 29, S. 619–633.

Ասորեստանի արքաների իրականացրած արշավանքները և երրորդ երկրների տարածքում գերիշխանության համար մղվող պայքարը,

• Լուսաբանել և քննել Ռուսա Սարդուրոդու (Ք.ա. մոտ 735-714 թթ.) գահակալության տարիներին մերձուրմյան ավազանում Ուրարտուի և Ասորեստանի միջև ընթացող պայքարի համապատկերում Թոփուզավայի արձանագրությունում վկայված իրողությունների Կ.Ֆ. Լեման-Հաուպտի վերականգնումները,

• Պարզաբանել սույն պայքարում Մուծածիրի նշանակությունը և Ք.ա. 714 թ. Սարգոն II-ի (Ք.ա. 721-705 թթ.) դեպի Վանի թագավորություն իրականացրած արշավանքի պատճառները,

• Լուսաբանել հեղինակի ենթադրած Ք.ա. VII-VI դդ. Ուրարտուի թուլացմանը և անկմանը, ինչպես նաև՝ արմենների գաղթին առնչվող իրողությունների աղբյուրագիտական և ժամանակագրական հենքն ու փոխկապակցվածությունը,

• Պարզաբանել Ք.ա. VI դարում Կ.Ֆ. Լեման-Հաուպտի վերականգնած Քսենոփոնի՝ Հայաստանի թագավորությանն առնչվող վկայությունների արդի փաստարկելիությունը և Բեհիսթունի արձանագրությունում հիշատակված *Ուրաշտու-Արմինա* երկրի դերն ապստամբությունում և դրա պատճառները,

• Լուսաբանել Կյուրոս Մեծի (Ք.ա. 559–530 թթ.) Ք.ա. 547 թ. դեպի Լիդիա կատարած արշավանքի վերաբերյալ հեղինակի փաստարկները, սկզբնաղբյուրում Լիդիա ընթերցմամբ պայմանավորված, Վանի թագավորության պատմության վերջին շրջանի իրողությունների վերականգնումը:

Հետազոտության ժամանակագրական սահմանները: Սույնով առաջին անգամ փորձ է արվել ներկայացնել Կ. Ֆ. Լեման-Հաուպտի աշխատությունների հիման վրա Վանի թագավորության պատմության հիմնահարցերը՝ սկսած Ք.ա. XIII դարից՝ Սալմանասար I-ի արձանագրություններում *Ուրուատրի* երկրի հիշատակությունից, մինչ Ք.ա. VI դարը՝ Բեհիսթունի արձանագրությունում *Ուրաշտու-Արմինա* երկրի վկայությունը:

Հետազոտության գիտական նորույթը և կիրառական նշանակությունը: Կ.Ֆ. Լեման-Հաուպտի հետազոտություններին նվիրված սույն աշխատանքը հնարավորություն է ընձեռում Հայկական լեռնաշխարհի Ք.ա. XIII-VI դարերի պատմության տարաբնույթ խնդիրներին ծանոթանալ այսուհետև հետազոտողի, մեր կողմից ամբողջացված և արդի տեսակետների համատեքստում քննված, շարադրանքում: Հեղինակի հետազոտությունները ուրարտագիտական աշխատություններում ուսումնասիրվել են դրվագային և տարաբնույթ մոտեցումներով: Այդ իսկ պատճառով քննված է նաև Կ.ֆ. Լեման-Հաուպտի ուսումնասիրությունների արծարծումը պատմագրությունում և տրված գնահատականները: Հետազոտության արդյունքները կարող են ապագա ուրարտագիտական աշխատանքներում պայմանավորել նոր գիտական քննարկումներ և հարցադրումներ: Այս հանգամանքը հնարավորություն է ընձեռելու նաև նորովի անդրադառնալ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի արծարծած տեսակետներին:

Հետազոտության մեթոդաբանությունը: Ատենախոսության շարադրման ընթացքում Կ.Ֆ. Լեման-Հաուպտի աշխատությունների համար կիրառել ենք պատմականության (*historicism*) մեթոդաբանությունը: Հետազոտողի կատարած ուսումնասիրություններն ըստ այդմ քննել ենք XIX դարավերջի և XX դարասկզբի պատմագիտության, հայագիտության և արևելագիտության պատկերացումների և եղած աղբյուրագիտական տվյալների համաձայն: Մեր հետազոտության ընթացքում Կ.Ֆ. Լեման-Հաուպտի արծարծած վարկածները համադրել ենք նաև նրան անհայտ աղբյուրագիտական վկայությունների հետ

և եզրակացությունների համար կիրառել ենք պատմահամեմատական մեթոդը՝ աղբյուրների տեղեկություններից հնարավոր համարելով այն վարկածը, որի օգտին վկայում են առավել փաստեր:

Աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրվածության աստիճանը: Ատենախոսության առաջնային աղբյուրներն են ասորեստանյան և ուրարտական սեպագիր աղբյուրները: Ք.ա. XIII-IX դդ. դեպի Հայկական լեռնաշխարհ իրականացված արշավանքների մասին պատմող ասորեստանյան աղբյուրները, թեպետ իրենց վերամբարձ ոճին, եզակի են: Այս աղբյուրների համադրական վկայությունների շնորհիվ մասամբ վերականգնելի են Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների գրաված տարածքը, բնակչության էթնոլեզվական կազմը, ինչպես նաև ներքին գործընթացները[11]: Ք.ա. VIII դարում Վանի թագավորության և Ասորեստանի մեջ ծավալված պայքարի համար եզակի են Թիգլաթպալասար III-ի (Ք.ա. 744-727 թթ.) և Սարգոն II-ի տարեգրությունները, ինչպես նաև վերջինիս, Ուրարտու կատարած արշավանքի մասին պատմող նամակը՝ ուղղված Աշշուր աստծուն[12]: Ք.ա. VIII դարավերջի և Ք.ա. VII դարի իրողությունների համար, արքայական արձանագրություններից զատ,[13] առանցքային են նաև նամակները և աստվածներին ուղղված հարցումները: Ի տարբերություն տարեգրությունների՝ նամակների աղբյուրագիտական բնույթն այլ է, քանզի վերջիններս արտացոլում են հստակ իրողություններ, սակայն նամակագրին և հասցեատիրոջը հայտնի իրադարձությունների համատեքստում[14]:

Ասորեստանյան աղբյուրների հաղորդած պատմաաշխարհագրական և այլ տվյալները համադրելի են նաև արդեն Ք.ա. IX դարի երկրորդ կեսից Հայկական լեռնաշխարհում վերելք ապրող Վանի թագավորության ուրարտերեն արձանագրությունների վկայությունների հետ: Կ.Ֆ. Լեման-Հաուպտի հեղինակած արձանագրությունների դիվանում և վերոնշյալ երկերում ուրարտական աղբյուրներին առնչվող հետազոտողի բոլոր թարգմանությունները ստուգվել և համադրվել են Ն. Հարությունյանի և Մ. Սալվինիի դիվանների արձանագրությունների թարգմանությունների հետ[15]: Հետազոտողի աղբյուրագիտական դիտարկումների արծարծումների համատեքստում անդրադարձել ենք նաև Ֆ. Վ. Քյոնիգի և Գ. Մելիքիշվիլու հեղինակած դիվանների առանձին

---

[11] Grayson A. K., Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (To 1115 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. I, Toronto–Buffalo–London, 1987. Grayson A. K., Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114–859 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. II, Toronto–Buffalo–London. Grayson A. K, Assyrian Rulers of the Early First Millennium BC II (858–745 BC), The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. III, Toronto–Buffalo–London, 1996.

[12] Tadmor H., Yamada Sh., The Royal Inscriptions of Tiglath-pileser III (744-727 BC), and Shalmaneser V (726-722 BC), Kings of Assyria, Royal Inscriptions of the Neo-Assyrian Period, vol. I, Winona Lake-Indiana-Eisenbraus, 2011. Frame G., The royal inscriptions of Sargon II, king of Assyria (721–705 BC), The Royal Inscriptions of the Neo-Assyrian Period, vol. 2, Eisenbrauns 2021.

[13] Leichty E., The Royal Inscriptions of Esarhaddon, King of Assyria (680–669 BC), The Royal Inscriptions of the Neo–Assyrian Period, vol. IV, Winona Lake, Indiana, 2011.

[14] Starr I., Queries to the Sungod. Divination and Politics in Sargonid Assyria, State Archives of Assyria, vol. IV, Helsinki, 1990; Lanfranchi G. B., Parpola S., The Correspondence of Sargon II. Part II: Letters from the Northern and Northeastern Provinces, State Archives of Assyria, vol. V, Helsinki, 1990.

[15] Арутюнян Н., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001. Salvini M. Corpus dei testi urartei, vol. V, Revisione delle epigrafi e nuovi testi su pietra e roccia (CTU A), dizionario urarteo, schizzo grammaticale della lingua Urartea, Editions de Boccard, 2018.

արձանագրությունների թարգմանությանը[16]: Ուրարտական, ինչպես նաև ասորեստանյան արձանագրությունների տեղեկույթի պարագայում որոշ դեպքերում աղբյուրագիտական վկայությունները համադրված են հնագիտական տվյալների հետ:

Ք.ա. VI դարի կեսերին Հայաստանում ծավալվող իրադարձությունների վերաբերյալ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի համար առաջնային աղբյուր էին Քսենոփոնի երկերը: «Կյուրոպեդիա» երկում Կյուրոսի դեպի Հայաստան կատարած արշավանքի և խալդայերին առնչվող խնդիրների վերաբերյալ վկայությունները, թերևս, սույն աշխատության հավաստի տվյալներից են: Ք.ա. V դարի վերջին Հայաստանով անցած Քսենոփոնը սույն տեղեկությունները ածանցում է «Անաբասիս» երկում արդեն որպես ականատես գրանցած իրողություններին:

Ք.ա. VI դարավերջին Հայաստանի մասին առանցքային սկզբնաղբյուրը Բեհիսթունի եռալեզու արձանագրությունն է: Հայաստանում ծավալված Ք.ա. 522-521 թթ. ապստամբությունը ճնշելու համար մղված ճակատամարտերի վկայություններից առնվազն Իզալայում մղված մարտի պարագայում, հնարավոր է որոշակի դատողություններ անել երկրի սահմանների մասին: Վերոհիշյալ իրադարձություններին է, թերևս, աղերսվում Արախայի որդի Խալդիտայի Բաբելոնիայում բարձրացրած ապստամբությունը: Բեհիսթունի արձանագրությունում վկայված անցքերին է առնչվում նաև Քսերքսեսի (Ք.ա. 486-465 թթ.) եռալեզու արձանագրությունը Վանում[17]: Քսերքսեսի արձանագրությունը փաստում է նաև Դարեհ I (Ք.ա. 521-486 թթ.) արքայի, թերևս, արդեն սատրապական կենտրոնի վերածված Վանում գտնվելու և արքայի ու հոր անունների հավերժացման մասին երբեմնի Տուշպայում:

Ուրարտուի անկմանն ու արմենների գաղթին առնչվող Կ.Ֆ. Լեման-Հաուպտի եզրակացությունները դարձան այն ատաղձը, որի հիման վրա Յ. Մարկվարտը շարադրեց իր «*Հայ ժողովրդի ծագումն ու վերածնունդը*» աշխատությունը[18]: Կ.Ֆ. Լեման-Հաուպտի ուրարտագիտական հետազոտություններն ու պատմաաշխարհագրական տեղորոշումներն են դարձել հենքը Ն. Ադոնցի *«Հայաստանի պատմություն»* աշխատության[19]: Այս աշխատությունում Ն. Ադոնցը նորովի քննարկեց ուրարտագիտության մի շարք հիմնահարցեր, որոնք աղերսվում էին Ասորեստանի արշավանքներին, թագավորության վերելքին, հզորացմանն ու անկմանը: Կ.Ֆ. Լեման-Հաուպտի հետազոտությունների վրա է նաև մեծապես խարսխված Գ. Մելիքիշվիլու «*Նաիրի-Ուրարտու*» աշխատությունը[20]: Հետազոտողը հենվում է Կ.Ֆ. Լեման-Հաուպտի վերականգնած ժամանակագրությանը ասորեստանյան, որոշ դեպքերում նաև՝ ուրարտական արշավանքների երթուղիները քննարկելիս:

Կ.Ֆ. Լեման-Հաուպտի աշխատությունները քննարկվում են Բ. Պիոտրովսկու «*Վանի թագավորությունը*» գրքում[21]: Հեղինակն անդրադարձել է Կ. Ֆ. Լեման-Հաուպտի

---

[16] König F. W., Handbuch der chaldischen Inschriften, Graz, Bd. I, 1955, Bd. II, 1957. Меликишвили Г., Урартские клинообразные надписи, Москва, 1960.

[17] Schmitt R., Die altpersischen Inschriften der Achaimeniden, Editio Minour mit deutscher Übersetzung, Wiesbaden, 2009.

[18] Marquart J., Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin, 1919.

[19] Ադոնց Ն., Երկեր, հատ. Դ., Քննական պատմություն Հայոց (հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը), Երևան, 2009:

[20] Меликишвили Г., Наири-Урарту, Тбилиси, 1954.

[21] Пиотровский Б., Ванское царство (Урарту), Москва, 1959.

աշխատություններում Տուշպային առնչվող հետազոտություններին, այն օղակող ամրոցների շղթային, Թոփրաքքալեի պեղումներին, Ասորեստանի արշավանքներին (բացառությամբ Ք.ա. 714 թ.), թագավորության անկմանը և Բեհիսթունի արձանագրության վկայություններին: Կ.Ֆ. Լեման-Հաուպտի առաջարկած դեպի Ուրարտու կատարված արշավանքների երթուղիններն է իր աշխատությունում արծարծում Ն. Հարությունյանը[22]: Ք.ա. VII-VI դդ. Ուրարտուի և հետուրարտական ժամանակաշրջանի պատմությանն առնչվող Կ. Ֆ. Լեման-Հաուպտի տեսակետները քննարկվում են նաև Դ. Մարշալ Լանգի աշխատությունում[23], իսկ Հյուսիսային Միջագետքին և Նաիրիին առնչվող պատմաաշխարհագրական տեղորոշումները՝ Կ. Կեսլերի երկում[24]:

Ուրարտական հիդրոշինարարությանը նվիրված Կ.Ֆ. Լեման-Հաուպտի հետազոտություններին անդրադարձել են Ն. Հարությունյանը, Մ. Սալվինին, Պ. Զիմանսկին, Գ. Գարբրեխտը[25]: Կ.Ֆ. Լեման-Հաուպտի աշխատություններում արծարծված թագավորության իշխող վերնախավի խնդրին նորովի անդրադարձել է Ա. Պետրոսյանը, իսկ Ռուսա արքաների հաջորդականությանը՝ Մ. Ռոուֆը, Ե. Գրեկյանը[26]: Կ. Ֆ. Լեման-Հաուպտին նվիրված ժողովածուում Մ. Սալվինին հակիրճ շարադրել է հետազոտողի գիտական վաստակի մասին, իսկ Ստ. Կոոլը վերլուծել է հնագիտական հետազոտությունները[27]:

Կ.Ֆ. Լեման-Հաուպտի ուսումնասիրությունների՝ Հայկական լեռնաշխարհի Ք.ա. XIII-VI դարերի պատմության այս կամ այն հարցերին առնչվող խնդիրների անդրադարձում եզրակացությունները քննարկվել ու համադրվել են նաև Մ. Սալվինիի[28], Վ. Մայերի[29], Ա.

---

[22] Арутюнян Н., Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики, 2-е изд., доп. и перераб., Санкт-Петербург, 2006.

[23] Marshall Lang D., Armenia: Cradle of Civilization, London, 1970.

[24] Kessler K., Untersuchungen zur historischen Topographie Nordmesopotamiens nach keilschriftlichen Quellen des 1. Jahrtausends v. Chr., Wiesbaden, 1980.

[25] Арутюнян Н., Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964. Salvini M., Il canale di Semiramide, “Geographia Antiqua”, 1992, vol. 1, pp. 67-80. Salvini M., Pas de qanats en Urartu, Irrigation et drainage dans l’Antiquité, qanāts et canalisations souterraines 2001 (ed. Briant P.) en Iran, en Égypte et en Grèce, BHAch II., Paris, 2001. Zimansky P., Ecology and Empire: The Structure of the Urartian State, Chicago 1985. Garbrecht G., Historische Wasserbauten in Ostanatolien–Königreich Urartu, 9.-7. Jh. v. Chr., “Wasserbauten im Königreich Urartu und weitere Beiträge zur Hydrotechnik in der Antike: Schriften der Deutschen Wasserhistorischen Gesellschaft”, Bd. 5, Siegburg, 2004, S. 1-104.

[26] Պետրոսյան Ա., Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը (Կ.Ֆ. Լեման-Հաուպտի ծննդյան 140-ամյակի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», 2002, թիվ 2, էջ 243-270: Roaf M., Thureau-Dangin, Lehmann-Haupt, Rusa Sarduriḫi and Rusa Erimenaḫi, “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies”, 2010, vol. V/1, pp. 66-82: Գրեկյան Ե., Կառլ Ֆրիդրիխ Լեման–Հաուպտը և ուրարտական արքայացանկը. «Երեք Ռուսաներ»–ի խնդրի շուրջ, «Վէմ», 2017, թիվ 2 (58), էջ 23-37:

[27] Salvini M., Carl Friedrich Lehmann-Haupt und die Urartu Forschung, in: Fink S., Eisterer K., Rollinger R., Rupnow D. (Hrsg.): Carl Friedrich Lehmann-Haupt. Ein Forscherleben zwischen Orient und Okzident, “Classica et Orientalia”, Bd. 11, Wiesbaden, 2015, S. 139-178. Kroll S., Erste Archäologische Forschungen in Urartu durch Carl Friedrich Lehmann-Haupt, in: Carl Friedrich Lehmann-Haupt. Ein Forscherleben zwischen Orient und Okzident, 2015, S. 131-138.

[28] Salvini M., Nairi e Ur(u)aṭri. Contributo alla storia della formazione del egno di Urartu (Incunabula Graeca 16), Roma, 1967. Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt, 1995.

Ֆուքսի[30], Կ. Ռադների[31], Ռ. Ռոլլինգերի[32], Ռ. Դանի[33], Չ. Բըրնիի[34], Ստ. Կռոլլի[35], Վ. Կլայսսի[36], Պ. Զիմանսկու[37], Ա. Քոսյանի[38], Ե. Գրեկյանի[39], Ս. Հմայակյանի[40], Մ. Բադալյանի[41], Ռ. Ցականյանի[42], Ա. Պետրոսյանի[43] և այլոց հետազոտություններին:

---

[29] Mayer W., Der Achte Feldzug Sargons II. im Jahr 714 v. Chr., Assyrien und Urarṭu, I, “Alter Orient und Altes Testament”, 395/1, Münster, 2013. Mayer W., Die assyrisch-urartäischen Bilinguen, Assyrien und Urarṭu, II, “Alter Orient und Altes Testament”, 395/2, Münster, 2013.

[30] Fuchs A., Urarṭu in der Zeit, in: S. Kroll, C. Gruber, U. Hellwag, M. Roaf, P. Zimansky (eds.), Biainili–Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12–14 October 2007, “Acta Iranica”, 51, Louvain, 2012, S. 135-161.

[31] Radner K., Die Macht des Namens, Altorientalische Strategien zur Selbsterhaltung, Arbeiten und Untersuchungen zur Keilschriftkunde, Bd. 8, Wiesbaden, 2005. Radner K., Between a rock and a hard place: Muşaşir, Kumme, Ukku and Subria–the buffer states between Assyria and Urarṭu, in: Biainili-Urartu, 2012, pp. 243–264.

[32] Rollinger R., The Median “Empire”, the End of Urartu and Cyrus the Great’s Campaign in 547 BC (Nabonidus Chronicle II 16), “Ancient West and East”, 2008, vol. 7, pp. 51-65. Rollinger R., Kellner A., Once More the Nabonidus Chronicle (BM 35382) and Cyrus’ Campaign in 547 BC, “Ancient West and East”, 2019, vol. 18, pp. 153-176.

[33] Dan R., A study of the toponyms of the Kingdom of Bia/Urarṭu, with a contribution by Marie-Claude Trémouille, Rome, Ismeo, Serie Orientale Roma, Nouva Serie, vol. 19, 2020.

[34] Burney Ch., Urartian Fortresses and Towns in the Van Region, “Anatolian Studies”, 1957, vol. 7, pp. 37-53. Burney Ch., Urartian Irrigation Works, “Anatolian Studies”, 1972, vol. 22, pp. 179-186. Burney Ch., Excavations at Haftavan Tepe 1969: Second Preliminary Report, “Iran”, 1972, vol. 10, pp. 127-142.

[35] Kroll S., Keramik urartäischer Festungen in Iran. Ein Beitrag zur Expansion Urartus in Iranisch-Azarbaidjan, “Archäologische Mitteilungen aus Iran”, Ergänzungsband 2, Berlin, 1976. Kroll S., Salmanassar III. und das frühe Urartu, in: Biainili-Urartu, 2012, S. 163-168. Kroll S., Rusa Erimena in archäologischem Kontext, in: Biainili-Urartu, 2012, S. 183-186.

[36] Kleiss W., Urartäische Plätze in Iran (Stand der Forschung Herbst 1975), “Archäologische Mitteilungen aus Iran”, 1976, Bd. 9, S. 19-43. Kleiss W., Alte Wege in West Iran, “Archäologische Mitteilungen aus Iran”, 1977, Bd. 10, S. 137-151. Kleiss W., Felszeichen im Bereich urartäischer Anlagen, “Archäologische Mitteilungen aus Iran”, 1981, Bd. 14, S. 23-26. Kleiss W., Urartäische und achämenidische Wasserbauten, in: Biainili-Urartu, 2012, S. 61-76.

[37] Zimansky P., Urartian Geography and Sargon’s Eighth Campaign, “Journal of Near-Eastern Studies”, 1990, vol. 49/1, pp. 1-21. Zimansky P., Xenophon and the Urartian Legacy, “Pallas”, 1995, vol. 43, pp. 255-267.

[38] Kossian A., The Mushki problem Reconsidered, “Studi Micenei ed Egeo-Anatolici”, 1997, vol. 39, pp. 253-266: Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999:

[39] Գրեկյան Ե., Ուրարտական սեպագրական դպրոցը, «ՎԷՄ», 2018, թիվ 2 (62), էջ 44-73: Գրեկյան Ե., Վանի (Նաիրի, Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) թագավորությունը, Հայոց պատմություն: Գիրք II (Ք.ա. IX դ.-Ք.հ. III դ.): Հին դարեր (Հին քարի դար-Ք.հ. III դար), Երևան, 2024, էջ 5-61: Grekyan Y., The Kingdom of Urartu, in: The Oxford History of the Ancient Near East, vol. IV, K. Radner, N. Moeller, D.T. Potts (eds.), Oxford, 2023, pp. 769-864. Grekyan Y., The Urartian Onomasticon: A Prosopographic Study, “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies”, 2023, vol. XVII/2.

[40] Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990: Հմայակյան Ս., Հայկ Նահապետի մասին առասպելն ու Կիբշա քաղաքը Նիբուրի լեռներում, «Պատմաբանասիրական հանդես», 1992, թիվ 1, էջ 125-132: Հմայակյան Ս., Գրեկյան Ե., Վանը հնադարում (Տուրուշպա, Տուշպա, Տուսպ), «Պատմաբանասիրական հանդես», 2010, թիվ 3, էջ 3-19: Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կարգը և տնտեսությունը, Հայոց պատմություն: Գիրք II (Ք.ա. IX դ.-Ք.հ. III դ.): Հին դարեր (Հին քարի դար-Ք.հ. III դար), 2024, էջ 42-75:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնադրույթները փորձաքննություն են անցել ՀՀ-ում կազմակերպված միջազգային և հանրապետական գիտաժողովներում և հրապարակված հայերեն ու անգլերեն հոդվածներում: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի կողմից:

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ ամփոփ ներկայացված են Կ. Ֆ. Լեման-Հաուպտի աշխատությունների գիտական նշանակությունն ու արդիականությունը, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, ժամանակագրական ընդգրկումը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, աշխատանքի մեթոդաբանությունը, աղբյուրագիտական հիմքը և թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է «*Ասորեստանի արշավանքները Հայկական լեռնաշխարհ Ք.ա. XIII-IX դդ.: Կենտրոնացված պետականության ձևավորումը»:* Ներկայացված են Կ. Ֆ. Լեման-Հաուպտի ուսումնասիրությունները Ուրուատի-Ուրարտու և Նաիրի երկրների տեղորոշումների վերաբերյալ: Քննված են Հայկական լեռնաշխարհի ասսուրերեն արձանագրությունները և ասորեստանյան արշավանքների ծիրում վերջիններիս առնչվող Կ. Ֆ. Լեման-Հաուպտի հետազոտությունները: Անդրադարձ է կատարված Վանի թագավորության կազմավորմանը և Սալմանասար III-ի (Ք.ա. 858-824 թթ.) արշավանքների համատեքստում Ուրարտուին առնչվող Կ. ֆ. Լեման-Հաուպտի և ցարդ առաջարկված տեղորոշումներին:

Ատենախոսության երկրորդ գլուխն ունի *«Բիայնիլի-Ուրարտուի վերելքը»* խորագիրը և բաղկացած է երեք ենթագլուխներից: Ներկայացված են ըստ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի հետազոտությունների Իշպուինիի միանձնյա գահակալության շրջանին առնչվող ուրարտական արձանագրությունների վկայությունները և Մենուայի հետ համատեղ գահակալության ընթացքում թագավորության ծավալումը մերձուրմյան ավազան: Քննված են Մենուայի գահակալության շրջանում Վանի թագավորությունում ծավալված իրողությունները՝ ջրաշինարարական աշխատանքները, կառուցված ամրոցները, իրականացված արշավանքներն ու նվաճումները: Անդրադարձ է կատարված Արգիշտի I-ի և առավելապես Սարդուրի II-ի օրոք Ուրարտուի և Ասորեստանի միջև ծավալված պայքարին, այն պայմանավորող գործոններին և երկուստեք իրականացված արշավանքների երթուղիներին:

---

[41] Բադալյան Մ., Խալդի: Ուրարտուում միաստվածության զարգացման վերականգնման փորձ, «Մերձավոր Արևելք», 2011, թիվ VII, էջ 80-88: Բադալյան Մ., Ուարուբանիի և Բագբարթուի հարաբերակցության շուրջ, «Մերձավոր Արևելք», 2012, թիվ VIII, էջ 23-39: Բադալյան Մ., «Պատմում են օղերը»... գիրը որպես ուրարտական կայսրության ստեղծման կարևոր չափանիշ, «Հայոց պատմության հարցեր», 2021, թիվ 2 (23), էջ 35-55:

[42] Ցականյան Ռ., Հայկազունիների թագավորության կազմավորումը և ամրապնդումը, Հայոց պատմություն: Գիրք II (Ք.ա. IX դ.-Ք.հ. III դ.): Հին դարեր (Հին քարի դար-Ք.հ. III դար), Երևան, 2024, էջ 137-152: Ցականյան Ռ., Պարսից տերության կազմավորումն ու Հայաստանը, Հայոց պատմություն, 2024, էջ 152-166:

[43] Պետրոսյան Ա., Հայ ժողովրդի ծագման խնդիրը, Երևան, 2017:

Երրորդ գլուխը՝ *«Վանի թագավորության թուլացումը և անկումը: Հայաստանը Ք.ա. VI դարում»*, բաղկացած է երկու ենթագլխից: Ներկայացված է Ռուսա Սարդուրորդու (Ք.ա. մոտ 735-714 թթ.) օրոք Ուրարտուի և Ասորեստանի միջև մերձուրմյան ավազանում մղված պայքարը, դրա պատճառները և Ք.ա. 714 թ. Սարգոն II-ի (Ք.ա. 721-705 թթ.) դեպի Ուրարտու իրականացրած արշավանքի երթուղին: Քննված են Ռուսա Արգիշտորդու օրոք (Ք.ա. մոտ 690/680–650/640–ական թթ.) կիմմերների հետ ձևավորված հարաբերությունները, ինչպես նաև Վանի թագավորության կործանման վարկածը, վերջինիս ածանցված արմենների գաղթի տեսությունը և Ք.ա. VI դարում Հայաստանում ծավալված իրադարձությունները՝ ըստ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի հետազոտությունների:

Եզրակացություններ: 1. Ասորեստանի արքայական արձանագրություններում Ք.ա. XIII դարի կեսերից հիշատակվում է հյուսիսում գտնվող Ուրուատրի անունով պետական կազմավորումը: Սույն երկրի տեղորոշման վերաբերյալ պատմագիտական ուսումնասիրություններում արծարծվել են տարաբնույթ տեսակետներ՝ տեղորոշելով Մեծ Զաբի, Մեծ և Փոքր Զաբերի, Արլ. Խաբուրի, Վանա լճի ավազանի, Կաշիարիի լեռների և վերոնշյալ ողջ աշխարհագրական միավորների շրջաններում: Հիմք ընդունելով աղբյուրների վկայությունները՝ Կ.Ֆ. Լեման-Հաուպտը Ասորեստանի արքա Սալմանասար I-ի (Ք.ա. 1272-1243 թթ.) օրոք հիշատակվող Ուրուատրի երկիրը տեղորոշում է Կադմուխիից հարավ: Հավանական է, որ ոչ միայն սույն շրջանն էր ընդգրկում Ուրուատրի երկիրը, այլև տարածվում էր ավելի արևելք՝ Հայկական Տավրոսից մինչև Զագրոսներ: Դատելով սկզբնաղբյուրների հիշատակություններից, թերևս, Տուր-Աբդինից և Հայկական Տավրոսից հյուսիս ընկած գոտին ասորեստանյան արձանագրություններում վկայված է Նաիրյան համադաշնության ներքո: Ուշագրավ է, որ Աշշուրնածիրպալ II-ի (Ք.ա. 883-859 թթ.) օրոք սույն շրջանները նույնպես վկայված են Նաիրի անվան ներքո, ինչը Կ.Ֆ. Լեման-Հաուպտն աղերսում է քաղաքական աշխարհագրության հետ: Սալմանասար I-ի արձանագրություններում հիշատակված Ուրուատրի, իսկ Աշշուրնածիրպալ II-ի՝ Ուրարտու երկրանուններն ըստ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի աղերսվում են Կադմուխիի և Տուր-Աբդինի լեռների հետ: Միջագետքյան առասպելաբանությունում և «Աստվածաշնչում» վկայված տապանի հանգրվան լեռը հետազոտողն աղերսում է Ուրարտու-Արարատի լեռներին՝ Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններին:

2. Թիգլաթպալասար I-ի (Ք.ա. 1114-1076 թթ.) գահակալության տարիներին դեպի Հայկական լեռնաշխարհ կատարված Ասորեստանի արշավանքների վերաբերյալ Կ.Ֆ. Լեման-Հաուպտի համար առանցքային դարձան Տիգրիսի թունելում և Մանազկերտի մոտ՝ Յոնջալուում, արքայի թողած արձանագրությունները: Վերոհիշյալ արձանագրությունները նաև փաստում են Ասորեստանի բանակի արշավանքի երթուղին: Մանազկերտից գտնված արձանագրությունում հետազոտողը դիտարկում է Հայկական լեռնաշխարհի երկու պետական կազմավորումների՝ Նաիրիի և Ուրարտուի (Խաբխու երկրի) մասին փաստող վկայություններ: Տիգրիսի թունելում գտնվող Սալմանասար III-ի (Ք.ա. 858-824 թթ.) արձանագրությունները և աղբյուրագիտական վկայությունները հիմք ընդունելով՝ հետազոտողը կարծում է, որ Ք.ա. 844 թ. Ասորեստանի արշավանքի երթուղին անցել է այստեղով՝ Նաիրիի տարածքով, որից անդին՝ Արածանու շրջանում, Ասորեստանի բանակին արդեն ընդդիմացել են *Արամու ուրարտացու* ուժերը: Կ.Ֆ. Լեման-Հաուպտը նաև ենթադրեց, որ Տիգրիսի թունելը եղել է պաշտամունքային վայր ասորեստանցիների համար՝ անդրաշխարհի մուտքը, քանզի, ըստ նրանց ընկալումների, այստեղից էր սկզբնավորվում

իրենց համար կենսական նշանակություն ունեցող Տիգրիսը: Ըստ հետազոտողի Տիգրիսի թունելին առնչվող պատկերացումներն արտացոլված են անգամ «Գիլգամեշ» էպոսում:

3. Կ.Ֆ. Լեման-Հաուպտը Լութիպրիի որդի Սարդուրիի գահակալության թվագրության և վերջինիս առնչվող իրողությունների վերաբերյալ ենթադրել է երկու տարբերակ: Հետազոտողի ենթադրած առաջին տարբերակի համաձայն՝ Նաիրիի արքա Լութիպրիի որդի Սարդուրին դեռևս Աշուրնածիրպալ II-ի օրոք Տուշպան վերածել էր իր իշխանության կենտրոնի և նրա քաղաքական ազդեցությունը տարածվում էր ընդհուպ Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններ: Կ.Ֆ. Լեման-Հաուպտը Լութիպրիի որդի Սարդուրիին Աշշուրնածիրպալ II-ի ժամանակակից է համարել՝ պայմանավորված երկու արքաների տիտղոսաշարերի նմանությամբ, և Արամուի ու Սարդուրի թագավորությունների գրված տարածքի տարբերությամբ: Լութիպրիի որդի Սարդուրիի արձանագրություններում Բիայնիլիի արքաներին բնորոշ «*տերը Տուշպա քաղաքի*» տիտղոսի չհիշատակվելու հանգամանքը հուշում է, որ արքան Ուրարտուից զատ այլ քաղաքական միավոր էր ներկայացնում: Ըստ հետազոտողի, նաև ներկայումս էլ փաստարկվող տեսակետի, արդեն Արամուի գահակալության տարիներին վերջինիս թագավորության կենտրոնը գտնվում էր Վանա լճից հյուսիս: Հարկ է նշել, որ հեղինակն այս տարբերակում կենտրոնացված պետականության կազմավորումը Հայկական լեռնաշխարհում Արամուից վաղ է թվագրում:

Արդի տվյալների համադրության դեպքում, համաձայն Կ.Ֆ. Լեման-Հաուպտի առաջարկած երկրորդ տարբերակի, ենթադրելի է, որ Արամուի կրած պարտությունից հետո նրա որդին կառուցել է «*Սարդուրիի ամրոցը*» և մայրաքաղաքն ասորեստանյան արշավանքների համար ավելի անմատչելի վայր տեղափոխել: Պատմագրությունում արմատացած հետազոտողի արծարծած սույն տարբերակն այժմ, սակայն, թեական է համարվում՝ Տուշպա քաղաքում Սալմանասար III-ի հարկ ստանալու իրողությամբ պայմանավորված: Սույն պարագայում Հայկական լեռնաշխարհում ուրվագծվում են ասորեստանյան արշավանքի առանցքային թիրախ Ուրարտուն և Սալմանասար III-ին հարկ վճարող Տուշպան:

Մի կողմից Սալմանասար III-ի արձանագրությունում Արծաշկուի որպես արքայական քաղաքի և Արամալուի համատեղ նշվելը, իսկ մյուս կողմից՝ Սարգոն II-ի Ք.ա. 714 թ. արշավանքի իրողություններում Արմարիյալի մարզում վկայված արքայական քաղաքների գտնվելը հուշում են, որ Արամուի թագավորության կենտրոնական շրջանները, և նրան հաջորդած գահակալների հայրական տիրույթները նույնական են:

4. Կ.Ֆ. Լեման-Հաուպտը կարծում է, որ Տուշպան դարձավ մայրաքաղաք միայն Իշպուինիի գահակալության ուշ շրջանում՝ որպես փաստարկ նշելով Վանա ժայռի (Թավրիզյան դարպասների) արձանագրությունը: Հետազոտողը հիմք ընդունելով Իշպուինիի միանձնյա գահակալության շրջանում կազմված արձանագրությունները, ենթադրում է, որ նրա թագավորությունը տարածվում էր Վանա լճի հյուսիսում և արևելքում՝ օղակելով Տուշպան: Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալության շրջանին առնչվող Կ.Ֆ. Լեման-Հաուպտի ուշագրավ կռահումն էր Միհերի դռան արձանագրությունում հիշատակված Ուիշինի քաղաքի Ուշնուի հետ համադրությունը, ինչպես նաև՝ ինչ որ պահի վերջինիս նվաճման և այստեղով դեպի Մուծաձիր տանող ուղին վերահսկելը: Քելիշինի արձանագրության վերաբերյալ հեղինակը կարծում է, որ Խալդի աստծուն նվիրված գործերը վկայում են վերջինիս պաշտամունքի կրոնականից քաղաքականի վերափոխման մասին: Ըստ հետազոտողի Խալդի աստծո պաշտամունքը,

ինչպես և այլ վայրերում, ներդրվել է Մուծածիրում, թերևս, վաղուց արդեն հայտնի միջազգային սրբավայրում: Կառուցվել են Տուշպայից այստեղ բերող ճանապարհներ և, հավանաբար, սրբավայրի շրջանը վերակառուցվել է ուրարտական քաղաքաշինական սկզբունքների համաձայն:

5. Կ.Ֆ. Լեման-Հաուպտը Մենուայի ջրանցքի կառուցումն աղերսում է մայրաքաղաքի հետագա ընդլայնման հետ, քանզի տեղանքի աղբյուրներն այլևս ի զորու չէին ապահովելու աճող բնակչության կարիքները: Ջրանցքի կառուցման վերաբերյալ Պատմահայր Մովսես Խորենացու երկում վկայված Շամիրամին աղերսվող առասպելը հետազոտողը բացատրում է հանգամանքով, որ այն ձևավորվել է Վանի թագավորությունում, թերևս, աղերսվելով նաև Մենուայի կնոջ՝ Թարիրիա թագուհու մասին հիշողությանը: Մենուայի ծավալած հիդրոշինարարական գործունեության մասին են վկայում նաև Արծվաբերդից, Մանազկերտի շրջանից և Բերկրիից գտնված արձանագրությունները: Ջրանցքաշինությունը հետազոտողն աղերսում է նաև թագավորության համար առանցքային նշանակություն ունեցող խաղողագործության հետ և ենթադրում է, որ խաղողագործությունն ու գինեգործությունն ունեցել են նաև պաշտամունքային նշանակություն:

Հետազոտողը, հիմք ընդունելով Մենուայի թողած արձանագրությունների վկայությունները, կարծում է, որ Վանի թագավորությունն իր գերիշխանությունը հաստատել է Արևմտյան Եփրատի և Արածանու վերին հոսանքների շրջանում: Արշավելով դեպի արևմուտք՝ Մենուան նվաճել է Շեբեթրիա երկիրը և այստեղ նշանակել է փոխարքա, իսկ հարավ-արևելքում իր գերիշխանությանն է ենթարկել Մանա երկիրը:

6. Կ.Ֆ. Լեման-Հաուպտը կարծում է, որ Սարդուրի II-ն իր արշավանքներով արևելքից և արևմուտքից օղակել էր Ասորեստանը, ինչը պայմանավորել է նաև տարածաշրջանում Ուրարտուի գերակայությունը: Հետազոտողը ենթադրում է, որ դա կասեցնելու համար ասորեստանյան էպոնիմատում հիշատակված Ք.ա. 754 թ. դեպի Արպադ ձեռնարկված արշավանքն առնչվում է Սարդուրի II-ի տարեգրությունում Աշշուր-նիրարի V-ի (Ք.ա. 754-745 թթ.) նկատմամբ վկայված հաղթանակին: Սույն իրողությամբ պայմանավորված՝ Ասորեստանի նոր գահակալ Թիգլաթպալասար III-ը Ք.ա. 743 թ. իր գործողությունների առանցքային մեկնակետ է ընտրում Արպադը և պաշարում քաղաքը: Հետազոտողը նախապես սույն իրողության հետ էր աղերսում Կումմուխի Քիշտան և Խալպի քաղաքների միջև ճակատամարտը: Կ.Ֆ. Լեման-Հաուպտը ենթադրում է, որ, չնայած Սարդուրի II-ի պարտությանը, Վանի թագավորության գլխավորությամբ հակաասորեստանյան դաշինքի պայքարը շարունակվեց անգամ Արպադի անկումից հետո: Գրեթե երկու տասնամյակ ծավալված պայքարը պայմանավորեց Ք.ա. 735 թ. Թիգլաթպալասար III-ի արշավանքն Ուրարտու: Սկզբնաղբյուրում վկայված Էնզի երկրի տեղորոշմամբ պայմանավորված՝ հետազոտողը թյուրիմացաբար ենթադրել է, որ Քիշտան և Խալպի քաղաքների միջև ճակատամարտը մղվել է Ք.ա. 735 թ., ինչին հաջորդել է Թիգլաթպալասար III-ի արշավանքն արևմուտքից և Տուշպայի պաշարումը:

7. Ուրարտուում Ռուսա Սարդուրորդու գահակալության տարիների իրողությունները վերականգնելիս Կ.Ֆ. Լեման-Հաուպտի համար առանցքային դարձավ Թոփուզավայի արձանագրությունը: Հետազոտողը վերջինիս տվյալները համադրում է ասորեստանյան աղբյուրների հետ, քննարկում տեսականորեն բոլոր հնարավոր վարկածները՝ Ք.ա. 714 թ. առաջ և հետո՝ Ասորեստանի հետ ծավալված հնարավոր իրադարձությունների ծիրում: Կ.Ֆ. Լեման-Հաուպտը Թոփուզավայի արձանագրությունների իրադարձությունների հենքը

դիտարկում է մերձուրմյան ավազանում՝ երրորդ երկրների տարածքում ընթացող պայքարը, որի բարձրակետն էր Մուծածիրի նվաճումը: Սույն պայքարում մինչ կիմմերների ներխուժումը՝ Ք.ա. 715 թ., Ռուսա Սարդուրորդու կողմն էր հաջողությունը: Մուծածիրի նվաճումը և կիմմերների ներխուժումը դարձան բեկումնային՝ պայմանավորելով Ք.ա. 714 թ. ասորեստանյան արշավանքը: Ուշագրավ է նաև, որ հետազոտողը տեղորոշեց Մուծածիրի վայրը և քննելով Սարգոն II-ի արշավանքի երթուղին, թեպետ թյուրիմացաբար, այն պատկերացրեց Վանա լճի ավազանով, սակայն արշավանքի վերջին փուլը վերականգնեց Ուրմիա լճի ավազանի արևմտյան շրջաններով:

8. Ք.ա. VII դարում Բիայնիլի-Ուրարտուում իշխած Ռուսա Էրիմենայորդի և Ռուսա Արգիշտորդի արքաների վերաբերյալ առաջին ամփոփ անդրադարձը Կ.Ֆ. Լեման-Հաուպտինն է: Հետազոտողն առաջինն է ենթադրել, որ Ռուսա Արգիշտորդու գահակալության շրջանում կիմմերների հետ կնքվել է դաշինք, և անգամ որոշ զորաջոկատներ անցել են կայազորային ծառայության: Կիմմերների հիմնական հատվածին Ռուսա Արգիշտորդին, սակայն ուղղորդել է դեպի արևմուտք: Կ.Ֆ. Լեման-Հաուպտը, ուսումնասիրելով Ռուսա Արգիշտորդու թողած Զվարթնոցի արձանագրությունը, այն համարում է ուրարտական այլ արձանագրություններից տարբեր՝ ենթադրելով հնարավոր առնչություններ ասսուրերենի հետ:

Հետազոտողը, պայմանավորված աղբյուրի սխալ թարգմանությամբ, Էրիմենայի որդի Ռուսային համարեց թագավորությունում իշխած վերջին արքա: Սույն եզրակացությունը կատարելիս Կ.Ֆ. Լեման-Հաուպտին հարկ էր նաև համադրել արմենների ներգաղթը և Ուրարտուի անկումը, ինչը հնարավոր էր մարա-լիդիական պատերազմին ածանցելու պարագայում: Սույն տեսության համար Կ.Ֆ. Լեման-Հաուպտի առաջնային կռվանը դարձավ արմենների տեղորոշումը ուրարտական արձանագրությունների վկայություններից հայտնի Ուրմե երկրում, որը նա, թյուրիմացաբար, տեղորոշեց Կապադովկիայում:

Հետազոտողը, անդրադառնալով Բեհիսթունի արձանագրության վկայություններին, կարծում է, որ ոչ վաղ անցյալում անկախությունից զրկված Հայաստանը հուժկու պայքար էր մղում Դարեհ I-ի դեմ: Դարեհ I-ը հայերի ապստամբությունը ճնշելու համար ուղարկել է միանգամից երկու բանակ, ինչը վկայում է, որ Հայաստանը պայքարի առանցքային ուժերից էր և, թերևս, սույն հանգամանքով է պայմանավորված Բաբելոնիայում Արախայի որդի Խալդիտայի բարձրացրած ապստամբությունը: Կ. Ֆ. Լեման-Հաուպտը կարծում է, որ արդեն սատրապական կենտրոնի վերածված Վանի՝ երբեմնի արքայանիստի հուշարձաններով այնքան էր հրապուրվել Դարեհ I-ը, որ այն պայմանավորեց նաև հետագա մի շարք ուրարտա-աքեմենյան փոխակերպումները:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ

1. **Սարգսյան Վ.,** Կ. Ֆ. Լեման-Հաուպտի հայեցակարգը Վանի թագավորության կազմավորման խնդրի շուրջ, «Հայոց պատմության հարցեր», 2016, N 17, էջ 3-18:
2. **Սարգսյան Վ.,** Բիայնիլի-Ուրարտուն Մինուայի օրոք՝ ըստ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի, «Մերձավոր Արևելք», 2018, N XIII, էջ 34-48:
3. **Sargsyan V.,** C. F. Lehmann-Haupt’s Studies On Assyrian Inscriptions Of The Armenian Highland, «Բանբեր արևելագիտության ինստիտուտի», 2022, N 2/1, էջ 13-21:
4. **Sargsyan V.,** Biainili-Urartu during the Regin of Ishpuini alone and together with his Son

Menua, according to the Resaearch of K. F. Lehmann-Haupt, «Բանբեր հայագիտության», 2024, N 2, էջ 28-44:

5. **Sargsyan V.,** The Struggle between Urartu and Assyria during the Reign of Rusa, Son Sarduri: According to the Research of C. F. Lehmann-Haupt, «Բանբեր հայագիտության», 2025, N 2, էջ 12-31:

6. **Սարգսյան Վ.,** Ուրարտուի և Ասորեստանի պայքարը Սարդուրի II-ի գահակալության տարիներին՝ ըստ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի ուսումնասիրությունների, «Հայոց պատմության հարցեր», 2025, N 2 (31) էջ 3-27:

7. **Tsakanyan R., Sargsyan V.,** Nairi and Uruaṭri-Urartu according to the Studies of K.F. Lehmann-Haupt, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2025, N 3, էջ 20-41:

8. **Kuntner W., Heinsch S., Badalyan M., Sargsyan V.,** Karmir Blur in the Late Urartian Context, “Iran and the Caucasus”, 2025, vol. 29/1, Brill, Leiden, Boston, pp. 1-22.

9. **Harutyunyan A., Sargsyan V., Sargsyan G.,** Rock-Carved Inscriptions of the Armenian Highlands: Sacred Symbolism and Cultural Continuity, “Cercetări Arheologice”, Journal of the National Museum of Romanian History, 2025, N 32/2, pp. 661-678.

САРГСЯН ВАГЕ САРГИСОВИЧ

Основные вопросы истории Ванского царства в трудах Карла Фридриха Лемана-Хаупта (XIII–VI века до н.э.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 «Историография, источниковедение».

Защита диссертации состоится 24-го февраля 2026 г. в 13^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 КВОН РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4).

РЕЗЮМЕ

Цель диссертации – исследовать ключевые вопросы истории Ванского царства в трудах выдающегося урартоведа К.Ф. Леман-Хаупта. Для достижения этой цели поставлены следующие задачи:

- Осветить свидетельства, касающиеся стран Уруатри–Урарту и Наири, в контексте ассирийских походов на Армянское нагорье в XIII–IX веках до н.э.
- Проанализировать процессы формирования и территориальной экспансии Ванского царства в предурмийском бассейне.
- Выяснить факторы, способствовавшие укреплению Урарту и его становлению доминирующей державой в Передней Азии.
- Рассмотреть противостояние Урарту и Ассирии в предурмийском бассейне в конце VIII века до н.э.
- Проанализировать интерпретации К.Ф. Леман-Хаупта относительно ослабления и упадка Урарту в VII–VI веках до н.э., а также его взгляды на миграцию армян и становление Армянского царства.

Диссертация состоит из введения, трёх глав, заключения и списка использованных источников и литературы.

Во **введении** раскрывается научная значимость и актуальность трудов К.Ф. Леман-Хаупта,

цели и задачи исследования, хронологические рамки, научная новизна и практическое значение, методология работы, источниковедческая база и степень изученности темы.

Первая глава, озаглавленная **«Ассирийские походы на Армянское нагорье в XIII–IX вв. до н.э.: формирование централизованной государственности»**, состоит из трёх подразделов, представляет взгляды Леман-Хаупта на локализацию стран Уруатри–Урарту и Наири. Ассирийские клинописные надписи с территории Армянского нагорья анализируются в контексте ассирийских военных кампаний. Особое внимание уделено локализациям, связанным с Урарту, и формированию урартийского государства.

Вторая глава, **«Возвышение Биайнили–Урарту»**, состоит из трёх подразделов. Рассматривается возвышение Ванского царства и его расширение в предурмийском бассейне во времена правления Ишпуини (ок. 830–810 гг. до н.э.). Анализируются масштабные строительные работы и военные походы при Менуа (ок. 810–791/790 гг. до н.э.). Обсуждается также противостояние с Ассирией в эпоху правления Аргишти I (ок. 791/790–771 гг. до н.э.) и Сардури II (ок. 771–735 гг. до н.э.).

Третья глава, «Ослабление и падение Ванского царства: Армения в VI веке до н.э.», включает два подраздела. Рассматривается борьба Урарту с Ассирией во времена правления Русы, сына Сардури (ок. 735–714 гг. до н.э.), а также отношения с киммерийцами при Русе, сыне Аргишти (ок. 690/680–650/640 гг. до н.э.). Глава также охватывает гипотезу Леман-Хаупта о падении Ванского царства, производную от неё теорию миграции арменов, а также политические события между Арменией и Ахеменидской Персией в VI веке до н.э.

В **заключении** подведены основные результаты диссертации.

SARGSYAN VAHE SARGIS

Fundamental Issues in the History of the Kingdom of Van in the Works of Karl Friedrich Lehmann-Haupt (13th–6th centuries BC)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "Historiography, Source Studies" 07.00.05.

The Defense of the Dissertation will be held on Februrary 24, 2026, at 13^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of HESC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

RESUME

The aim of the dissertation is to examine the principal issues of the history of the Kingdom of Van as reflected in the scholarly works of the eminent Urartologist K. F. Lehmann-Haupt. To achieve this aim, the study addresses the following objectives:

- To elucidate the evidence relating to the lands of Uruatri–Urartu and Nairi within the context of Assyrian campaigns conducted in the Armenian Highlands during the 13th to 9th centuries BC.
- To analyse the processes underlying the formation and territorial expansion of the Kingdom of Van within the pre-Urmian Basin.
- To clarify the factors contributing to the consolidation of Urartu and its emergence as the dominant power in Asia Anterior.
- To examine the confrontation between Urartu and Assyria in the pre-Urmian Basin in the late 8th century BC.
- To examine K. F. Lehmann-Haupt's interpretations concerning the weakening and decline of Urartu in the 7th–6th centuries BC, as well as his views on the migration of the Armenians and the formation of the Armenian Kingdom.

The dissertation comprises an introduction, three chapters, a conclusion, and a list of sources and literature used.

The **introduction** outlines the scholarly relevance and contemporary significance of K. F. Lehmann-Haupt's works, the aims and objectives of the research, its chronological framework, scientific novelty, and practical value. It also defines the methodological approach, the source base, and the current state of research on the topic.

The first chapter, entitled **"Assyrian Invasions of the Armenian Highlands in the 13th–9th Centuries BC: The Formation of Centralised Statehood"**, consists of three subchapters. It presents Lehmann-Haupt's views on the localisation of the lands of Uruatri–Urartu and Nairi. Assyrian cuneiform inscriptions from the Armenian Highlands are analysed in the context of Assyrian military campaigns. Particular attention is paid to localizations associated with Urartu and the emergence of the Urartian state.

The second chapter, **"The Rise of Biainili–Urartu"**, consists of three subchapters. It examines the emergence of the Kingdom of Van and its expansion into the pre-Urmian Basin during the reign of Išpuini (c. 830–810 BC). The chapter further analyses the extensive construction activity and military campaigns undertaken under Menua (c. 810–791/790 BC). Finally, it discusses the confrontation with Assyria during the reigns of Argišti I (c. 791/790 –771 BC) and Sarduri II (c. 771–735 BC).

The third chapter, entitled **"The Weakening and Decline of the Kingdom of Van: Armenia in the 6th Century BC"**, is divided into two subchapters. It addresses the Urartian–Assyrian conflict during the reign of Rusa, son of Sarduri (c. 735–714 BC), and examines relations with the Cimmerians under Rusa, son of Argišti (c. 690/680–650/640 BC). The chapter also considers Lehmann-Haupt's hypothesis regarding the collapse of the Kingdom of Van, the derivative theory of the migration of Armens stemming from this collapse, and the political developments involving Armenia and the Achaemenid Persian Empire in the 6th century BC.

The **conclusion** of the dissertation summarizes the main findings.